Azg
armenian daily
1 ՓԵՏՐՈՒԱՐ 1994. ԵՐԵՔՇԱԲԹԻ. # 17 (620)

Ալժիրը վերջապես ունեցավ նախագահ

ԱԼԺԻՐ, 31 ՀՈՒՆՎԱՐ, BBC: Լամին Զրուալին երեկ տվեց նախագահական իր երդումը: Նախորդ օրը երկրի անվտանգության բարձրագույն խորհուրդը նրան նշանակել էր հանրապետության նախագահ, 3 տարվա անցման շրջանի համար: Լամին Զրուալը զեներալ է, պաշտպանության նախարար, եւ նա խագահական պաշտոնին զուգահեռ պահելու է նաեւ նախարարի այդ պաշտոնը: Երդմնառությունից հետո նա հայտարարեց, թե պաշտպանելու է ժողովրդին, նրա շահերն ու իրավունքները, միաժամանակ հարգելու է իսլամական կրոնը: Նա երդվեց վերջ տալ երկրում 2 տարի առդեն մոլեգնող վայրագության ալիքը, որին ցայսօր զոհ են գնացել 2000-ից ավելի մարդ: Հետմիջօրեին, երդման արարողությունից հետո, ընդհանուր գլխավոր կուսակցության՝ Իսլամական փրկության ճակատի կողմից Ալժիրի փողոցներից մեկում սպանվեց երկրի խաղաղական հայտնի գործիչներից մեկը:

Յուրի Մեկիոմն ընտրվեց Ղրիմի նախագահ

ՍՐԵՎԱՆ, 31 ՀՈՒՆՎԱՐ, BBC, WST: Հավաքելով ձայների ավելի քան 70 տոկոսը, Ռուսաստանի հետ սերտ տնտեսական սերտագույն հարաբերությունների կողմնակից Յուրի Մեկիոմն ընտրվեց Ղրիմի Ինքնավար Հանրապետության նախագահ: Թեեւ ընտրադաշտի ժամանակ նա խոստացել էր հանրաքվե կազմակերպել Ղրիմի պատկանելության հարցի վերաբերյալ, սակայն ընտրության արդյունքների պարզումից հետո հայտարարեց, թե Ուկրաինայից խզվելու մասին խոսք լինել չի կարող, այլ ձգտելու է Ռուսաստանի հետ տնտեսական ինտեգրացիայի եւ լավագույն բալացման ուղղությամբ: ■

ՑԻՆԱՍԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Անգլիան, Չինաստանը եւ Աֆղանստանը չհեղանում են

Վերջին շրջանում զարաբաղյան հակամարտությունը միջազգայնացման նոր ծեւ է ստացել՝ կապված աղբեջանական կողմում աֆղան մոջահեդների մասնակցության, չինական արտադրության զենքի առկայության փաստերի եւ բրիտանական մամուլից ստացված այն լրատվության, ըստ որի Մեծ Բրիտանիայի կառավարության լուռ գիտությամբ անգլիական զենքեր, խորհրդականներ եւ վարձկաններ են տրամադրվելու Ադրբեջանին: Լեռնային Ղարաբաղի իշխանությունների խնդանքով Հայաստանի արտգործնախարարությունը զբաղվում է այդ հարցով: ՀՀ ԱԳՆ մամուլի եւ հասարակայնության հետ կապերի ծառայության հրապարակման համաձայն, Ալմաթիում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատարը հանդիպել է Աֆղանստանի դիվանագիտական ներկայացուցչի հետ, որը հերքել է ադրբեջանական զինված ուժերում մոջահեդների մասնակցությունը եւ պատասխանատվություն է հայտնել երեւան ուղարկելու Աֆղանստանի ներկայացուցչին այդ հարցի քննարկման համար: ՀՀ արտգործնախարարությունն է հրավիրվել նաեւ Հայաստանում Չինաստանի դեսպանը, ճշտելու Ադրբեջանում չինական արտադրության զենքի առկայության հետ կապված հարցը: Չինաստանի դեսպանը հերքել է այդ փաստերը եւ պատասխանատվություն է հայտնել ենթադրելու ցանկացած հարց: Իր հերթին Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանը դիմել է այդ երկրի արտգործնախարարությանը՝ պարզաբանելու Ադրբեջանին անգլիական զենք եւ վարձկաններ տրամադրելու հարցը: Առաջին հանդիպման ժամանակ անգլիական կողմը հերքել է այդ փաստերը: ՀՀ ԱԳ նախարարությունը այդ կապակցությամբ նամակներ է պատրաստում ուղղված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի եւ ԵԱՀԽ Մինսկի խմբի նախագահներին:

«ԱՊՎ-ի ոչնչացումը թշնամու գործ էր»

Ինչպես հայտնի է, Հայաստանի նախագահի հունվարի 14-ի հրամանագրով Ազգային անվտանգության պետվարչությունը ենթարկվեց վերակառուցման: Եվ ահա երեկ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ նախագահի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Ատոմ Սանուչարյանն անդրադարձավ այդ խնդրին՝ որակելով դա որպես Հայաստանի նկատմամբ թշնամական տրամադրված երկրների հատուկ ծառայությունների ձեռքի գործ: Այդ եզրակացությանը նա հանգեց լրագրողների երկարատեւ հարցերի միջոցով: Ատոմ Սանուչարյանը բոլոր կուսակցություններին, հասարակական-քաղաքական կազմակերպություններին եւ այլոց կոչ արեց միասին աշխատել եւ «անիվը պտտել այն ուղղությամբ, որը մեզ անհրաժեշտ է»: Նա հույս հայտնեց, որ առաջիկա 2-3 ամիսների ընդունելությունները հասնելու համար որոշիչ կլինեն:

Անդրադառնալով ակնկալվող սադրանքներին, նախագահի նախկին խորհրդականը նշեց, որ պետք է հասնել զարաբաղյան խնդրի արժանապատիվ լուծման, «ինչը հնարաւոր է, որ Ղարաբաղի ժողովուրդը պետք է անվտանգ զարգացման երաշխիք ունենա, եւ երբեք, չպետք է լինի հրեշ մեկի տիրապետության տակ: Սա որպես նվազագույնը, սակայն դրան: Մանուչարյանը չբացառեց այնպիսի իրավիճակ, երբ որոշման դրեն տարբերակ կարող է ծառնալ լինել Ղարաբաղին, սակայն Հայաստանն այդ տարբերակով չբավարարվի: Ինչպես Պրն. Մանուչարյանը մեկնաբանեց նաեւ ԵԱՀԽ եւ Ռուսաստանի խաղաղարար միջոցառումները, նշելով, թե վերջինս ընդգրկում է ռազմական գործողությունների վերսկսումն անհնար դարձնող մեխանիզմներ, սակայն դրանք ունեն բերություններ: Ինչ վերաբերում է Անդրանիկ Միհրանյանի առաջարկին հայտնի տարբերակին, ապա ըստ պրն. Մանուչարյանի, դա էլ է մոտ է Ռուսաստանի միջնորդված դիրքորոշմանը:

Բնականաբար, նրկար ժամանակ զրկված լինելով խորհրդավոր գործչին հարցեր տալու հնարավորությունից, լրագրողները փորձեցին պարզել նրա դիրքորոշումը կառավարության, նախագահի եւ ներքգործնախարարության վերաբերյալ: Պարզվեց, որ նախկին խորհրդականը շատ ցածր է գնահատում կառավարության գործունեությունը, գտնում է, որ այն ի վիճակի չէ տկել իրավիճակը, եւ պետք է փոխարինվի նոր կառավարությամբ: Առավել կտրուկ հարձակումների թիրախ դարձավ ներքգործնախարարությունը, որը «դուրս է հսկողությունից, դուրս է իշխանությունից»: Ըստ որոշ Մանուչարյանի, եթե այդպես շարունակվի, շուտով հանրապետությունում ոչինչ չի լինի, բացի ներքգործնախարարությունից: ՆԳՆ-ն մեղադրվեց հասկանալի տնտեսական ճգնաժամին նպաստելու գործում, որի հաստատած ապերային հարկերի պատճառով այսօր գործունյա մարդիկ փոխում են հանրապետությունից: Դեմին մանկական զարմանքի արտահայտություն տալով, պրն. Մանուչարյանը մի քանի օրինակներ բերեց, թե ինչպես են գործում այդ ապերային հարկերը:

Որոշակի քննադատության արժանացան նաեւ նախագահի արտաքին քաղաքականության առանձին դրվագներ, որոնց բացահայտումը, սակայն, նախկին խորհրդականի խոսքերով, կապված է պետական գաղտնիքների հետ եւ հետաքրքրական նրանք չէ: ■

ԴԱՐԱԲԱՂ

Թշնամու մի մեծ խմբավորում շրջապատման մեջ

Կաստրի մարտեր Օմարի լեռնանցքի մերձակայքում

ՎԱՀԵՐԱ ԱՊԱՏԱՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 31 ՀՈՒՆՎԱՐ- Անցած երկու օրերի ընթացքում իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում բարդանում է մնալ խիստ լարված: ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի տվյալներով, հունվարի 29-ին եւ 30-ին առավել ծանր մարտեր էին ընթանում Քելբաջարի շրջանի հյուսիսում Օմարի լեռնանցքի մերձակայքում: Ղարաբաղյան ուժերը, կատեցնելով թշնամու բոլոր գրոհները եւ անցնելով կազմակերպված հակագրոհի, շրջապատման մեջ են առել թշնամու մի խոշոր զինված խմբավորում 900-1400 զինվոր: Որոշ տեղեկությունների համաձայն, դարաբաղյան ուժերին հաջողվել է դադարեցնել Խանլար-Քելբաջար ավտոճանապարհի վրա գտնվող կամուրջը եւ վերահսկողության տակ վերցնել ճանապարհը դրանով իսկ փակելով օգնության շտաբող ադրբեջանական կազմավորումների ուղին: Ներկայումս միջոցառումներ են ձեռնարկվում թշնամու խմբավորումը ոչնչացնելու նպատակով:

Երեկ մարտեր էին ընթանում նաեւ Մարտակերտ շրջկենտրոնի մերձակայքում, որտեղ դարաբաղյան ուժերը ետ են քշել թշնամու գրոհները դուրս գալով մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի զգալի կորուստներ: Մաքրամասնություններ ճշտվում են: Փոխադարձ հաջողություններով մարտեր էին ընթանում նաեւ Մարտունու եւ Աղդամի շրջանների սահմանագծում, որոնք, սակայն, ռազմաճակատի գծի վրա էական փոփոխություններ չեն ազդել: Ընդհանրապես, վերջին երկու օրվա ընթացքում ոչնչացվել է հակառակորդի 6 միավոր զրահատեխնիկա, այդ թվում 4 Տ-72 տիպի տանկ, ինչպես նաեւ առնվազն 150 զինվոր: Հայկական կողմից զոհվել է 6, վիրավորվել 19 զինվոր:

Այսօր առավոտյան ռազմաճակատներում համեմատաբար հանգիստ է եղել: Ռազմական գործողություններ շարունակվել են միայն Քելբաջարի շրջանի հյուսիսում: Ադրբեջանական բանակի ռազմական հինգնաթիռներն այսօր 2 անգամ փորձել են խախտել ԼՂՀ օդային սահմանը, սակայն հակաօդային պաշտպանության ուժերի շնորհիվ դա նրանց չի հաջողվել:

Մյուս կողմից երեկ վաղ առավոտյան մոտ ժամը 4-ին, ադրբեջանական բանակի հետախուզական մի վաշտ անակնկալ գրոհ է ձեռնարկել Տաուշի շրջանի Մոխես գյուղի պաշտպանական դիրքերի ուղղությամբ: Այս մասին տեղեկացնում են Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից: Հայկական սահմանապահ զորքերը պատասխան հարձակում են ձեռնարկել: Մոտ 2.5 ժամ տեւած մարտերի ընթացքում թշնամին հետ է շպրտվել կրելով կենդանի ուժի զգալի կորուստներ: Հայկական կողմից տուժածներ չկան: Սահմանամերձ մյուս շրջաններում երեկ եւ նախորդ գիշեր իրավիճակը հանգիստ է եղել:

Ադրբեջանում ապատում են հին գերիներին

Երեկ «Հելսինկյան նախաձեռնություն-92» Լեռնային Ղարաբաղի կոմիտեն դիմում է հղել աշխարհի բոլոր պետություններին, որտեղ մասնավորապես ասվում է, «Հելսինկյան նախաձեռնություն-92» ԼՂՀ կոմիտեն ցանկանալով աջակցել ռազմագերիների եւ պատանդների, ինչպես նաեւ անհայտ կորածների հիմնահարցի լուծմանը, նշելով նրանց նկատմամբ ծաղրուծանակի անթույլատրելիությունը, հասատելով Ադրբեջանում ռազմագերիների պահման վայրերում նրանց սպանության փաստերը (Յուրի Ջանգիրյան, Հրաչ Շահբազյան, Առնո Մկրտչյան, Արվիդ Մանգասարյան, Հրաչ Պետրոսյան) դիմում է աշխարհի երկրների կառավարություններին, իրավապահ եւ խաղաղարար կազմակերպություններին կոչ անելով ներգործել Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության վրա՝ հայազգի ռազմագերիների ոչնչացման, հարազատական նպատակներով նրանց օգտագործման հաղթականությունն ամրապնդելու համար, ԼՂՀ իշխանություններին հանձնել սպանված ռազմագերիների դիակները եւ միջազգային ճշգրտական վերահսկողություն սահմանել գերիների եւ պատանդների իրավունքները պահպանելու նպատակով:

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

Խորհրդավոր լռակյացը սկսում է խոսել

Ատոմ Մանուչարյանի չորրորդ «վերադարձը»

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Աղեն սովորական է դարձել, որ ամեն անգամ, երբ հանրապետության համար կեսական նշանակություն ունեցող այս կամ այն բնագավառում իրավիճակը սրվում է, շատերի համար անաղասելիորեն Ատոմ Մանուչարյանը կրկին հայտնվում է քաղաքական ասպարեզում: Այս անգամ, ըստ նրա, խնդիրն այն է, որ ամենայն հավանականությամբ Ղարաբաղը կկարողանա կասեցնել թշնամու լայնածավալ հարձակումը եւ մոտ օրերս բեկում մտցնել պատերազմի ընթացքում, եւ շատ կարեւոր է, որ մենք կարողանանք խաղաղության հասնել երկրորդ անգամ ձեռքից բաց չթողնելով բարենպաստ պահը: Երեկ Հայաստանի հանրապետական կուսակցության գրասենյակում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ատոմ Մանուչարյանը բոլոր կուսակցություններին, հասարակական-քաղաքական կազմակերպություններին եւ այլոց կոչ արեց միասին աշխատել եւ «անիվը պտտել այն ուղղությամբ, որը մեզ անհրաժեշտ է»: Նա հույս հայտնեց, որ առաջիկա 2-3 ամիսներ խաղաղության հասնելու համար որոշիչ կլինեն:

Անդրադառնալով ակնկալվող սադրանքներին, նախագահի նախկին խորհրդականը նշեց, որ պետք է հասնել զարաբաղյան խնդրի արժանապատիվ լուծման, «ինչը հնարաւոր է, որ Ղարաբաղի ժողովուրդը պետք է անվտանգ զարգացման երաշխիք ունենա, եւ երբեք, չպետք է լինի հրեշ մեկի տիրապետության տակ: Սա՝ որպես նվազագույնը, սակայն դրան: Մանուչարյանը չբացառեց այնպիսի իրավիճակ, երբ որոշման դրեն տարբերակ կարող է ծառնալ լինել Ղարաբաղին, սակայն Հայաստանն այդ տարբերակով չբավարարվի: Ինչպես Պրն. Մանուչարյանը մեկնաբանեց նաեւ ԵԱՀԽ եւ Ռուսաստանի խաղաղարար միջոցառումները, նշելով, թե վերջինս ընդգրկում է ռազմական գործողությունների վերսկսումն անհնար դարձնող մեխանիզմներ, սակայն դրանք շատ բերություններ ունեն: Ինչ վերաբերում է Անդրանիկ Միհրանյանի առաջարկին հայտնի տարբերակին, ապա ըստ պրն. Մանուչարյանի, դա էլ է մոտ է Ռուսաստանի միջնորդված դիրքորոշմանը:

Բնականաբար, նրկար ժամանակ զրկված լինելով խորհրդավոր գործչին հարցեր տալու հնարավորությունից, լրագրողները փորձեցին պարզել նրա դիրքորոշումը կառավարության, նախագահի եւ ներքգործնախարարության վերաբերյալ: Պարզվեց, որ նախկին խորհրդականը շատ ցածր է գնահատում կառավարության գործունեությունը, գտնում է, որ այն ի վիճակի չէ տկել իրավիճակը, եւ պետք է փոխարինվի նոր կառավարությամբ: Առավել կտրուկ հարձակումների թիրախ դարձավ ներքգործնախարարությունը, որը «դուրս է հսկողությունից, դուրս է իշխանությունից»: Ըստ պրն. Մանուչարյանի, եթե այդպես շարունակվի, շուտով հանրապետությունում ոչինչ չի լինի, բացի ներքգործնախարարությունից: ՆԳՆ-ն մեղադրվեց հասկանալի տնտեսական ճգնաժամին նպաստելու գործում, որի հաստատած ապերային հարկերի պատճառով այսօր գործունյա մարդիկ փոխում են հանրապետությունից: Դեմին մանկական զարմանքի արտահայտություն տալով, պրն. Մանուչարյանը մի քանի օրինակներ բերեց, թե ինչպես են գործում այդ ապերային հարկերը:

Որոշակի քննադատության արժանացան նաեւ նախագահի արտաքին քաղաքականության առանձին դրվագներ, որոնց բացահայտումը, սակայն, նախկին խորհրդականի խոսքերով, կապված է պետական գաղտնիքների հետ եւ հետաքրքրական նրանք չէ: ■

ԲՈՍՆԻԱ

Զրոհայինները կհարվածեն սերբերին

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 31 ՀՈՒՆՎԱՐ, BBC, WST: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում այս օրերին պատրաստվում են կանաչ լույս վառել ՆԱՏՕ-ի առջեւ բոսնիական սերբերին օդային հարվածներ հասցնելու հարցում, պատճառաբանելով Թուզլայում շրջափակված կանադական զորամիավորման վիճակը, ինչպես նաեւ մուսուլմանական շրջաններին մարդասիրական օգնություն փոխանցելու անհրաժեշտությունը: Մինչ սերբական ուժերի հրամանատարությունը սպառնաց, թե կանգ չի առնի ՆԱՏՕ-ի զրոհային ինքնաթիռների վրա կրակ բացելու հեռեւանքների առաջ, Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Վլադիմիր Ժիրինովսկին հայտնեց սերբական Սուրբոտիցա հեռակում հայտարարեց, թե ՆԱՏՕ-ի կողմից սերբերի դեմ օդային որեւէ հարված իր կուսակցության կողմից կհամարվի Ռուսաստանի դեմ պատերազմի հայտարարություն: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Մ. Նահանգների, Ֆրանսիայի եւ Բրիտանիայի ներկայացուցիչներն այս օրերին դիվանագիտական աշխատանք են տանում օդային հարվածի հարցում Ռուսաստանի հնարավոր վետոյի մոտքից անելու մասին հարցերով:

Հայ խորհրդարանականներ կայցելեն Մեծ Բրիտանիա: ԵՐԵՎԱՆ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՄՆԱՐՔ: Փետրվարի վերջերին հայ խորհրդարանականների պատվիրակությունը կայցելի Մեծ Բրիտանիա: Ինչպես հայտնեց պատվիրակության ղեկավար, խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Արամ Մայիլյանը, երկաշաբթի ուղեւորությունը կազմակերպվում է Բրիտանիայի խորհրդարանի հրավերով:

digitised by A.R.A.R.@

տեղական

ՈՒՍ

Հանրաքվեական վարչությունում

Հունվարի 28-ին տեղի ունեցավ ՀՌԱԿ Հանրաքվեական վարչության հերթական նիստը: Լսվեց վարչության ատենադպիր Ռուբեն Սիրզախանյանի հաղորդումները ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանի հետ հանդիպման եւ ՀՌԱԿ ղեկավարական խմբակցության նիստի մասին: Նիստում արծարծվեց ՀՌԱԿ Հանրաքվեական վարչության նախաձեռնությամբ կազմակերպված տոնական տնտեսական եւ հասարակական ինքնակազմակերպումների կազմակերպման հարցը: Վարչության անդամներ Հակոբ Ավետիսյանը, Հարություն Կարապետյանը մերկայացրին մամուլի աշխատողների հետ հերթական իրանդիպման նախապատրաստմանն առնչվող խնդիրները: Նիստում ինքնակվեց Միջազգային Լիբերալի հետ փոխհարաբերությունների հետագա զարգացմանն առնչվող հարցը: Հանրաքվեական վարչությունը որոշումներ ընդունեց ՀՌԱԿ ծրագրի եւ կանոնադրության մեջ մասնակի փոփոխությունների հանձնաժողովի աշխատանքների վերսկսման, ՀՌԱԿ եւ ՌԱԿ համատեղ նիստի, ինչպես նաեւ ՀՌԱԿ երեւան քաղաքի եւ մեծաքանակ շրջանների վարչականների նիստի վերաբերյալ:

Պետրոս Քաջախյանը ԳԽ խմբակցության ղեկավար

Օրերս տեղի ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդում Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության պատգամավորական խմբակցության նիստը: Տեղի ունեցավ խմբակցության ղեկավարի ընտրություն: Փակ գաղտնի քվեարկությամբ ՀՀ Գերագույն խորհրդում ՀՌԱԿ պատգամավորական խմբակցության ղեկավար ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի տեղական ինքնակառավարման հանձնաժողովի նախագահի տեղակալ Պետրոս Քաջախյանը: Խմբակցության նիստում ելույթ ունեցան ՀՌԱԿ Հանրաքվեական վարչության ատենապետ Ռուբեն Սիրզախանյանը, փոխատենապետ Կարեն Կոսանդյանը, վարչության անդամ Հակոբ Ավետիսյանը:

Վարչականների ժողով

Հունվարի 29-ին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրաքվեական վարչության գրասենյակում տեղի ունեցավ ՀՌԱԿ երեւան քաղաքի եւ քաղաքամերձ շրջանների վարչականների ժողով: Ժողովին մասնակցում էին ՀՌԱԿ երեւանի շրջանային վարչությունների, ՀՌԱԿ «Լեռ», «Թոքվենց», «Արմենական», «Արաքսիր», «Արաքսիր-2», «Արաքսիր-4», «Արտաշատյան», «Էրեբունի», «Նոր կյանք», «Արա Գեղեցիկ», «Պայքար», «Մալաթիա», «Անդրանիկ», «Միհրան Տամատյան», «Կենտրոն», «Զարթոնք», «Տիգրան Չուխաճյան», «Վերածնունդ», «Խրիմյան Հայրիկ», «Շողակաթ», «Կոմիտաս», «Վաղարշապատ», «Արմավիր», «Մասիս», «Նաիրի» ակումբների ներկայացուցիչները: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում ՀՌԱԿ-ի կողմից կազմակերպված Հայաստանի սոցիալ տնտեսական եւ քաղաքական ինքնակումների կազմակերպման, ինչպես նաեւ Հանրաքվեական վարչության կազմակերպական աշխատանքների շուրջ: Ժողովում ելույթ ունեցան Հանրաքվեական վարչության ատենապետ Ռուբեն Սիրզախանյանը, փոխատենապետ Կարեն Կոսանդյանը, վարչության անդամ Հակոբ Ավետիսյանը, փոխանդամ Գուրգեն Հակոբյանը, ՀՀ Գերագույն խորհրդում ՀՌԱԿ պատգամավորական խմբակցության ղեկավար Պետրոս Քաջախյանը: ■

Երեկ Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Արամ Սրբահամյանն ազատվել է աշխատանքից սեփական դիմումի համաձայն: Նախագահի աշխատակազմից մեզ հասած լուրերից պարզել միայն, որ այսօր տեղի կունենա պրն. Սրբահամյանի վերջին մամուլի ասուլիսը, որի ընթացքում, հնարավոր է, կնշվեն որոշ մանրամասներ: Նոր նախագահի նոր քարտուղարի վերաբերյալ առայժմ անորոշ լուրեր են տարածվում:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Ամենամեծ խնամքի կարիք ունեն մայրերն ու նորածինները

ՌՈՒԶԱՆ ԽՈՒՇՈՒՏՅԱՆ

«Էրեբունի» բժշկական կենտրոնում, անցյալ տարաբ յուրօրինակ հավաք էր. առողջապահության դրոշակները հանդիպում ունեցան Կանանց համահայկական նորաստեղծ ընկերության եւ Միացյալ ազգերի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) երեւանյան գրասենյակի տնօրեն Ց. Ալանկոյի հետ: Զրույցի հիմնական թեման կանանց եւ երեխաների առողջությունն էր:

Կանանց առողջապահական կենտրոնի տնօրեն Մարինե Սահակյանի տվյալներով, հայ կանանց շրջանում նվազում է հղիության արհեստական վիժեցման ցուցանիշը եւ աճում վստահությունը հակաբեղմնավորիչ դեղամիջոցների ամենամյա կանխարգելիչ հետազոտությունների հանդեպ: Հասատության գիտական աշխատանքները ղեկավարում են նաեւ Հարվարդի համալսարանի դոկտորները:

Հանրաքվեական ծննդատան գլխ. բժիշկ Կարեն Ադամյանը հաղորդեց, որ այստեղ արդեն կիրառվում է անհատական ծննդաբերության (երբ ըստ ցանկության կարող են ներկա լինել նաեւ ծննդկանի մերձավորները) եւ նորածնին կրծքով կերակրելու փորձը: Կենտրոնին օժանդակում են ՅՈՒՆԻՍԵՖ-ը, Կարմիր խաչը եւ այլն:

Առողջապահության փոխնախարար Վլադիմիր Դեմիրճյանն այն կարծիքին է, որ մոր եւ մանկան գերխնդիրները մեզանում երբեմն ավելի շատ սոցիալ-հոգեբանական, քան սոցիալ-տնտեսական բնույթ ունեն. առանձնապես բնական կերակրումը: «Հղի եւ կերակրող կանանց սնուցման» ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ը ՀՀ կառավարությանը հատկացրել է 11 մլն դոլար:

Ըստ փոխնախարարի տվյալների, ԱՄՆ-ում մայրերի 70-75 տոկոսը չի հրաժարվում նորածին երեխային կրծքով կերակրելուց:

Հանրապետությունում 3 անգամ (1989-ից հետո) ավելացել է բնակչության սակավարյունությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն առաջարկել է կանանց վիտամիններով ապահովելու ծրագիր:

1,5 տոկոսով ավելացել է նորմայից ցածր քաշ ունեցող ծնված երեխաների թիվը: 1989 թ. ծննդկանների մահացության թիվը կազմել է 48,5 տոկոս, 90-ին՝ 52,6 տոկոս, 91-ին՝ 34,9 տոկոս, 92-ին՝ 21,3 տոկոս, 93-ին՝ 21,3 տոկոս: Եթե 1990 թ. հանրապետությունում 48 ընտանիք կորցրել է իր խնամողին, ապա 93-ին այդ թիվը չի անցել 20-ից:

Մասնագետները անհանգստացած են մանկածին (15-16) տարեկան մայրերի ծննդաբերությունների հաճախականացումից: Հաճախակի են դարձել նաեւ մեծահասակ մայրերի ծննդաբերությունները, հատկապես աղեղի գոտում, ինչը եւս դատճառ է դառնում ուղեղի հիվանդություն ունեցող նորածինների լույս աշխարհ գալուն: Փոխնախարարը նշեց նաեւ, որ վերջին 3 տարում ծնելիությունը հանրապետությունում 7,8 տոկոսով նվազել է, ինչ բնորոշ է ԱՊՀ բոլոր երկրներին. անցյալ տարի ծնելիությունը Ռուսաստանում եւ Ուկրաինայում գերազանցել է մահացությանը:

ԱՍՈՒԼԻՍ

Հայաստանը մեծ հույսեր չպիտի կապի օգնության հետ

ԱՆԱՀԻՏ ԹՈՐՈՍՅԱՆ

Հունվարի 17-21-ին Թուրքիայի Անթալիա քաղաքում տեղի ունեցավ Սեւծովյան տնտեսական զարգացման եւ համագործակցության կազմակերպության նախաձեռնած մի սեմինար, որ իրականացնում էր բարական միջազգային համագործակցության գործակալությունը. նվիրված էր այսպես կոչված «դոնոր» երկրների օգնության արդյունավետության բարձրացմանը: Սա նախադեպ չունեցող միջոցառում էր, անցյալ ուրբաթ մամուլի ասուլիսում հայտարարեց ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Արմենակ Դարբինյանը, որին մասնակցում էին բոլոր դոնոր երկրները (մասնավորապես ԱՄՆ-ը, Գերմանիան, Շվեդիան եւ այլն), խոշոր միջազգային տնտեսական կազմակերպությունները, այդ թվում Համաշխարհային բանկը, Միջազգային վալյուտային ֆոնդը, Եվրոպական զարգացման եւ վերակառուցման բանկը, ինչպես նաեւ օգնություն ստացող երկրների միջինասիական պետությունները, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Մոլդովան:

Ինչպես նշեց փոխնախարարը, ԽՍՀՄ փլուզումից հետո Արեւմուտքն մեծ ուշադրություն է դարձնում նախկին Միության հանրապետությունների տնտեսությանն ու տնտեսավարմանը, այդ իսկ պատճառով առաջնային տեղ է գրավում տեխնիկական օգնությունը, որն իրականացվում է արեւմտյան փորձի, մասնագետների փոխանակմամբ: Մարդասիրական օգնությունը, որը նախատեսվում է տնտեսապես ծանր կացության մեջ գտնվող երկրներին, ներառյալ [illegible] են Հայաստանը, Վրաստանը, Տաջիկստանը, վերջերս նաեւ Ադրբեջանը:

Այս ամենից բացի, արեւմտյան օգնությունն ընդգրկում է երկարաժամկետ աջակցություն պետական ինվեստիցիոն ծրագրերին եւ հիմնականում ընդգրկում է այնպիսի ծրագրեր, որոնք պետության հոգածության առարկա են Էներգետիկայի եւ տրանսպորտի զարգացում, որոգման ծրագրեր, սոցիալական խնդիրների իրականացում:

Հաջորդ հարցը, որը հետաքրքրում էր «դոնորներին», առնչվում էր օգնության կազմակերպմանը. «Դոնորները» անհանգստացնում էր, թե ինչպես են օգտագործում տրված օգնությունը, քանզի վերջերս հղում օգնություն ստացող երկիր պետք է ստեղծի ազգային էկոնոմիկա:

Ըստ փոխնախարարի, մեր դիրքորոշումը, որը բաղկացած է Հայաստանում օգնության համակարգման հարցերով զբաղվող ստորաբաժանումների ղեկավարներից, լավ տպավորություն թողեց խորհրդաժողովի մասնակիցների, հատկապես «դոնոր» երկրների վրա: Փոխնախարարն իր խոսքում նշեց, որ Հայաստանն առայժմ չի կարող մեծ հույսեր դնել օգնության ծավալների վրա:

Որոշակի դեր խաղաց նաեւ Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտության մեջ Հայաստանի ներքաշված լինելը, քանի որ որոշ երկրներ հրաժարվում էին օգնություն ցույց տալ պատերազմող երկրներին, մասնավորապես Գերմանիան: Այնուամենայնիվ դեռի Հայաստան ուղղվող օգնության ծրագրերն անհամեմատ ավելի շատ էին, քան միջինասիական պետություններինը, բացառությամբ Կիրգիզստանի: Դա բացատրվում է նաեւ պատվիրակության արդյունա[illegible] աշխատանքով:

Այսպիսով, 1994 թ. Հայաստանին ուղղված օգնության ծրագրերը Եվրոպական համայնքի կողմից, կգնահատվեն մոտավորապես 9 միլիոն էքյու, որն ընդգրկելու է 3 խոշոր բնագավառ (Էներգետիկա, մասնավոր հատվածի զարգացում, սոցիալական ծրագիր):

ԱՄՆ-ը պետք է ցույց տան 50 միլիոն դոլարի օգնություն, մասնավորապես 10 միլիոն դոլարը պետք է հատկացվի սոցիալական ինվեստիցիոն ֆոնդերի ստեղծման համար: Ֆոնդերի ստեղծման հիմնական նպատակը գործազրկության ծավալների ընդլայնման պայմաններում սոցիալական լարվածությունը մեղմացնելն է:

Նշվեց նաեւ, որ ակտիվ հարաբերություններ են ծավալվում ճարտնական օգնության գործակալության հետ, որի տրամադրած 2-3 միլիոն դոլարը կուղղվի դեղորայքների ձեռքբերմանը: Փորձ ծրագրեր կան Հոլանդիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի հետ:

«Զվարթնոցում» կկառուցվի խոշոր բեռնատեղ

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆՆԳ: Եվրոպական միավորումը Հայաստանում իրականացնում է տեխնիկական օգնության 35 ծրագիր: Դրանցից մեկը երեւանի «Զվարթնոց» օդանավակայանի բեռնանցունակության ավելացումն է: Ինչպես հայտնեց Հայաստանի էկոնոմիկայի փոխնախարար Արմեն Դարբինյանը, բեռնատեղի կառուցումը ֆինանսավորելու պատրաստակամություն է հայտնել Վերականգնման եւ զարգացման եվրոպական բանկի ղեկավարությունը: Այդ ծրագրին բանկը նախատեսում է հատկացնել 12-15 միլիոն դոլար: Սակայն բանկը պայման է առաջադրել, որին համաձայնություն [illegible] է հայտնել Հայաստանի ավիացիայի ղեկավարությունը փնտրում է համար գործընկեր: ■

ՀԱԿԻՐՄԱ

Հայ-վրացական առեւտրատնտեսական դարմանագրի կատարումն ապահովելու համար

ԵՐԵՎԱՆ, ՀՈՒՆՎԱՐ 28, ՍՆՆԳ: Հունվարի 25-ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների միջեւ [illegible] արդյունաբերական համագործակցության վերաբերյալ ծեռք բերված դարմանագրի կատարումն ապահովելու մասին:

ՀՀ կառավարության մամուլի կենտրոնի հաղորդման համաձայն, ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարված է պետական առաջադրանքներում ընդգրկել Հայաստանից Վրաստան առաքվող կարեւորագույն արտադրանքների, ժողովրդական սպառման ապրանքների եւ դարեմամբերի առաքման ծավալները, տասնօրյա ժամկետում կատարել ներմուծվող ապրանքների խմբաքանակի հաշվարկում՝ ըստ Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական վարչությունների, գերատեսչությունների:

ՀՀ էներգետիկայի եւ վառելիքի նախարարությանը հանձնարարված է երկաբաթյա ժամկետում կառավարություն ներկայացնել առաջարկություններ Հայաստանից Վրաստան արտադրանք առաքող ձեռնարկություններին եւ կազմակերպություններին արտոնյալ եւ առաջնահերթ կարգով էլեկտրաէներգիա եւ գազ մատակարարելու վերաբերյալ:

«Հայաստան» հիմնադրամի միջոցներով

Երեկ Վանաձորի Տարոն-3 թաղամասում բնակարանամուտ տոնեցին 15 ընտանիքներ: Շահագործման հանձնված թիվ 51 տեմը կառուցել է «Ուկրհին» ֆիրմայի թիվ 3 վարչությունը: Կառուցման վերջին փուլն իրականացվել է «Հայաստան» հիմնադրամի միջոցներով: Բնակարանամուտի հանդիսավոր արարողությանը ներկա էին հիմնադրամի նախագահ Մանուսակ Պետրոսյանը, ՀՀ շինարարության նախարարի առաջին փոխնախարար Վլադիմիր Սարգսյանը, հիմնադրամի շինարարության հարցերով խորհրդական ամերիկահայ էդվարդ [illegible]լանյանը եւ այլք: Նրանք հավաստիացրին, որ հիմնադրամի աջակցությունը ապագայում այսուհետեւ եւս կշարունակվի: ■

ԳՅՈՒՄՐԻ

Քաղխորհրդի նախագահ չընտրվեց

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Գյումրիի քաղխորհրդի նստաշրջանը 7 օր անընդմեջ աշխատանից հետո էլ չկարողացավ ընտրել քաղխորհրդի նոր նախագահ: Ինչպես ժամանակին հաղորդվել է, աշխատանում տեղ գտած բացթողումների համար ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունն իր հունվարի 21-ի նիստում անվստահություն էր հայտնել Գյումրիի քաղաքապետ Լյովա Ադամյանին:

Ըստ գործող օրենսդրության, այժմ քաղաքը ղեկավարելու համար կնշանակվի Գյումրիում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ՝ քաղխորհրդի եւ գործկոմի նախագահի իրավասություններով:

Գյումրիի տեղական լրատվության միջոցները տարածել են Շիրակի գոտում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Անդրանիկ Քոչարյանի դիմումը քաղաքի բնակչությանը: Անդրադառնալով հանրապետությունում, Գյումրիում տիրող ծանր կացությանը եւ առջեւում հսկայական անելիքների առկայությանը, լիազոր ներկայացուցիչն այդ փաստաթղթում նշում է, որ պետք է անել ամեն ինչ հրաժարվելու «աղեղի գոտի» կամ «աղեղյալ» դրոշմներից: Վաղուց արդեն ժամանակն է, ասվում է դիմումում, շահարկված ու չարաշահված այդ ճնշող կարգավիճակից անցնելու վերականգնվող, իսկ հետագայում վերածվող գոտու կարգավիճակին եւ հոգեբանությանը: Առավել եւս, որ ստեղծված աղեղալի վիճակը հետեւանք է որոշ երկրաբարժի, նույնքան էլ, անհոգության, ամենաթողության, անտարբերության, ինքնագոհության եւ հանրային անտարբերության:

Մեր առաջնահերթ խնդիրը, այնուհետեւ ասվում է դիմումում, թերեւս կլինի հենց այդ երեւույթների եւ խոչընդոտների վերացումն ու հաղթահարումը: Պրն. Քոչարյանը համոզմունք է հայտնում, որ որեւէ ծրագիր հնարավոր կլինի իրագործել միմիայն միասին, ուս ուսի տված՝ առավիճելով սեփական ուժերին եւ այն քաղաքական կամքին ու կենսունակությանը, որն այնքան հատուկ է գյումրեցիներին: ■

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության Դ տարի
Գլխավոր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562941, տելեֆ 243266 CPIRI SU
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Ոճը եւ տառաձեւերը ՊԱՌԵԼ ԴԱԼԼԱՔԵԱՆԻ
Apple Macintosh
համակարգային շարածոը «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010
Published in U.S.A. by AZG Publishing Co.,
22122 Sherman Way, Suite 203, Canoga Park,
CA 91303, Call (818) 598-0423 Fax:
(818)340-9819 for subscription rates.
Publisher - Հրատարակիչ
Dr. Krikor Krikorian -
Դոկտ. Գրիգոր Գրիգորեան
Executive Director - Տնօրէն
Vartan Karaoghlanian -
Վարդան Գարաօղլանեան
Production Manager -
Raffi Shoubookian
Արտադրութիւն
Ռաֆֆի Շուրբուքեան
«ԱԶԳ» օրաթերթը հաղորդվում է ԱՄՆ «ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի համակարգային կապով
Հեռախոս. 7 8852 281425,
Ֆաքս 7 8852 285082
E-MAIL INTERNET: ROOT.
YEREVAN @ REX. IASNET. COM

digitised by A.R.A.R.@

ՏԻՊԱՐ, ԱՊԱՀ

ՈՒՍՈՒՍՏԱՆ

Գավրիիլ Պոպովը կրկին աստղարեգում

ՄՈՍԿՎԱ, 30 ՀՈՒԼԻՍ. ՍՏԱՐ. Հունվարի 29-ին Մոսկվայում բացվեց ժողովրդավարական բարեփոխումների առաջատարների շարժման 2-րդ համագումարը: Ռուսաստանի ավելի քան 60 հանրապետությունների, երկրամասերի ու մարզերի մոտ 150 ղեկավարներ ներկայում են դեկտեմբերյան ընտրություններից հետո երկրում ստեղծված խաղաղական իրավիճակը եւ շարժման խնդիրները:

Քաղաքական զեկուցումով հանդես եկավ շարժման նախագահ Գավրիիլ Պոպովը: «Ռուսաստանի ներկա իրադրության էությունը ոչ թե բարեփոխումների ծրագրից կասավորվող հետեւանքներն են, այլ այն, որ ընտրությունների ընթացքում Ռուսաստանը մերժեց 1991 թ. օգոստոսից հետո ընդունված բարեփոխումների առեւտրատնտեսական կուրսը», հայտարարեց Պոպովը:

Հունվարի 30-ին համագումարը տարածեց ԱՊՀ երկրների ժողովրդավարական կազմակերպություններին ուղղված դիմումի տեքստ: Փաստաթղթում նշվում է, որ այդ պետություններում անցկացվող սոցիալական, տնտեսական ու խաղաղական բարեփոխումները բախվում են ընդհանուր դժվարությունների: Պատմականորեն գոյացած տնտեսական ու մշակութային կապերը թելադրում են ԱՊՀ երկրների ժողովրդավարական հանրության դիրքորոշումների համաձայնեցման անհրաժեշտությունը:

Ելնելով դրանից, համագումարն ԱՊՀ երկրների ժողովրդավարական կազմակերպությունների դեկավարներին առաջարկեց 1994 թ. առաջին կիսամյակում այդ կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն անցկացնել: ԱՊՀ-ում միասնական ժողովրդավարական տարածքի ոլորտանման նոյտակով:

«Ռուսաստանի Լիբերալ դեմոկրատական կուսակցության բոլոր գաղափարները ընդունելի են ինձանից: Բայց այն չի կարելի համարել ֆաշիստական կուսակցություն: Դա ազգայնականության տիպիկ կուսակցություն է», հայտարարեց Գավրիիլ Պոպովը: Նա նաեւ խոստովանեց, որ «Ներկայիս Լիբերալ դեմոկրատական կուսակցության հետ փոխգործողությունն անիմաստ է: Ճանի դեռ այն չի վերածել ֆաշիստական կազմակերպության»:

Գործադուլների սպառնալիք Սիբիրում

ՏՅՈՒՄԵՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ՍՏԱՐ. Սիբիրի նավթահանքերում կարող են տարերային գործադուլներ սկսվել: Այդ մասին հայտնում է Ռուսաստանի կառավարության դեկավար Վիկտոր Չերնոմիրդինին Խանտի-Մանսիական Ինքնավար Օկրուգի վարչակազմի դեկավար Ալեքսանդր Ֆիլիպենկոյի հղած հեռագրում:

Հնարավոր գործադուլների պատճառն արդեն մարտակարարված նավթի դիմաց սպառողների չվճարելն է, պարտքերն այսօր կազմում են մոտ 4 տրիլիոն ռուբլի: Շաս նավթահանքերի աշխատողներ աշխատավարձ չեն ստացել 3-5 ամիս:

Խանտի-Մանսիական Ինքնավար Օկրուգը երկրի գլխավոր նավթային բազան է: Այսպես անցյալ տարի արդյունահանվել է 200 միլիոն տոննա նավթ:

Օդահենին հեռացրին համալսարանից

ՏԱՇՔԵՆՏ, 31 ՀՈՒԼԻՍ, ՍՏԱՐ. Աբդուժամիլովը, որը մասնակցել էր դեկտեմբերին Դոնի Ռոստովում ինքնաթիռի առեւանգմանը (պատանդներ վերցնելով), հեռացվել է Տաշքենդի պետհամալսարանից: Միաժամանակ հեռացվել են կիրառական մաթեմատիկայի ու ծրագրավորման ֆակուլտետի դեկանը եւ նրա դոցենտներից: Աբդուժամիլովի հանցակից Մարաս Կասուզբեկովը հեռացվել էր ճարտարապետա-շինարարական ինստիտուտից դեռ անցյալ տարվա նոյեմբերի 23-ին:

ՎՐԱՍՏԱՆ

«Մեշալի ծանր հրեածին իրավիճակ»

ԹԲԻԼԻՍԻ, 31 ՀՈՒԼԻՍ, ՍՏԱՐ. Քաղաքում ուսանողական կազմակերպությունների միջեւ խնդրական պատերազմ է ծավալվել, գնում է Թբիլիսի հրատարակչությունը: Անցնող վիճակի նստաշրջանի ընթացքում այն բանի օգտին, որ «Վրեժխնդիր Վրաստանում հանկարծ ոչ ոքի չի մնացել, ասաց Վրաստանի գլխավոր դատախազ:

Մամուլի՝ մինչ գաղտնիքների խնդիրը: Ներկայումս Վրաստանում կա Ազիզբայեջանից խլված 250 հազար գաղթական: Այդ ժամանակ հայտնվեցին Վրաստանի ժողովրդական ազատարարի հարազատներ: Դրանցից մեկը՝ Ալեքսանդրը, Վրաստանի գլխավոր դատախազ:

լուսանկարի գլխարի խոսար գիտությունները իրականացվեն նաեւ Թբիլիսիում»: «Վրաստանի անտան ծանր հրեածին իրավիճակը բացասաբար է ներգործում ստանալու հնարավորության», ընդգծեց Լեկիշվիլին: Բացի դրանից, բան ծանոթ չեն մարդասիրական օգնության կորստյան փաստերը: Այս պես, միայն հունվարի 27-ին ստացված 90 տոննա մարդասիրական բեռների 7 տոննան հասցեատերերը:

Ի հայտ են եկել նաեւ ոստիկանության ֆիրմաներ, որոնք հարստանում են Վրաստանի տարածով Հայաստանի եւ Ադրբեջանի հատուկ նշանակության ազատ գոտի՝ ներմուծելով ապրանքներ: Դրանցից մեկը՝ Ալեքսանդրը, ասաց Գաղացիան, այդ ֆիրմաները Հայաստանից եւ Ադրբեջանից 7-անգամ ամերիկյան դոլար են գանձում բեռների յուրաքանչյուր տոննայի առաքման դիմաց, մինչդեռ երկաթուղու նրանք վճարում են վրացական կարգավորմամբ:

«Այդ խախտումներ հաստատվել է բացահայտել մեր հայ գործընկերների շնորհիվ, որոնք հանձնարարություն էին ստացել դարձել տվյալ փաստերին», ասաց Գաղացիան:

«Մենք այժմ լրջորեն զբաղվում ենք այդ գործով: Դեղերից Վրաստանի գլխավոր դատախազ:

Մամուլի՝ մնում գաղտնիքների խնդիրը: Ներկայումս Վրաստանում կա Ազիզբայեջանից խլված 250 հազար գաղթական: Այդ ժամանակ հայտնվեցին Վրաստանի ժողովրդական ազատարարի հարազատներ: Դրանցից մեկը՝ Ալեքսանդրը, Վրաստանի գլխավոր դատախազ:

Ադրբեջանի ազգային ազատարարի խոսքերով, Թբիլիսիում գործում է Ադրբեջանի հատուկ ծառայությունների գրասենյակ: Դրանց գլխավոր գործունեությունն է հրաժարվել Ադրբեջանի հանդեպ ուղղված գործողություններ իրականացնելուց:

Նոյեմբերի գործակալությունը հունվարի 31-ին հաղորդում է, որ մոտ ժամանակներս Վրաստանի ներքին գործերի նախարարությունը կդադարեցնի «բոլոր ժամանակների ու ժողովուրդների առասպելաբանի Սատանի գիտնականների անշնչի հարուցման» հավակնության գաղափարը, որն այսօր դիտվում է Թբիլիսիի գլխավոր առաջին գործարանի հիմնադրման վրա ստեղծված «Սատանա» ֆիրմայի նկատմամբ: Կրթությունը վեց եղբորայի, Ասիայի եւ Ամերիկայի ավելի քան 500 հիշ գինի ու կոնյակ, որ Կորբայինն ներմուծել էին տարբեր տարիներին:

ԱԴՐԲԵՋԱՆ

Թերթերը մնում են առանց թղթի

Շարունակվում են այցելությունները Բաքու

ԲԱՔՈՒ, 28 ՀՈՒԼԻՍ, ՍՏԱՐ. «Ազերբայջան» պետական հրատարակչությունը, որը երկրում լրագրերի տպագրության բնագավառում մենաշնորհ է, բոլոր տպագիր օրգաններին հայտարարել է, որ փետրվարի 1-ից խմբագրություններին լրագրային թուղթ չի մատակարարելու:

Դիմումի մեջ նշվում է, որ դա հարկադիր միջոցառում է եւ պայմանավորված է թղթի ներմուծման դժվարությունների պատճառով թերթերի մեծ մասը սպիտված կլինի փակվել:

Հրատարակչության որոշումը չի վերաբերում պետական թերթերին («Բաքինսկի ռաբոչի» եւ «Խալգ գազեթի»), որոնք դառնում են նախագահի աշխատակազմի պատասխանաբերբեր:

Թուրքիայում գործող ադրբեջանական մշակույթի կենտրոնի ներկայացուցիչներ Մուհամմեդ Քենգերլին, Սիմեդ Գարաբաշ եւ Մեհմեդ Մուսաղը «Մուսավաթ» կուսակցության նստավայրում հանդիպում ունեցան Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպանության ընկերության ղեկավարության հետ: Նրանք Բաքվում են գտնվում «Մուսավաթ» կուսակցության եւ Ազգի հրավերով, Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության հիմնադիր Մահմեդ Էմին Ռասուլզադեի ծննդյան 110-րդ տարեդարձի տոնակատարության առթիվ:

Հանդիպման ընթացքում հյուրերը նշեցին, որ ազգային կենտրոնը կարող է համաշխարհային մամուլին լրատվություն տալ Ադրբեջանի խնդիրների մասին: Քենգերլին նշեց, որ ինքը էլչիբեյին ճանաչում է Ադրբեջանի նախագահ: Դրա հետ մեկտեղ նա ասաց, որ կատարելով ընդունված բարոյագիտական նորմերը, ինքը համաձայնել է հանդիպում ունենալ Հեյդար Ալիեւի հետ:

Միաժամանակ հաղորդվում է, որ հունվարի 27-ին «Մուսավաթ» կուսակցության նախագահ Իսա Գամբարի մասնակցությամբ հիմնվել է Մուսավաթական ուսանողների երիտասարդական կազմակերպություն: Դրա հիմնադիր խորհրդաժողովում Իսա Գամբարն ասել է, որ ներկայիս երիտասարդների վրա մեծ պատասխանատվություն է ընկած, քանզի նրանք միաժամանակ պետք է պայքարեն հանուն ժողովրդավարության եւ ազատության, ինչպես նաեւ դառնան բարձրակարգ մասնագետներ:

WE PROVIDE YOU WITH TELECOMMUNICATION IN FORMER USSR MEMBERS

You will be sure to operate with the resources of over 120 countries using the telecommunication services provided by the Institute for Automated Systems (IAS).

Among other things, IAS staff carries out research, development and implementation of:

- systems of automated information exchange based on packet data communication facilities;
- hardware/software facilities for packet switching networks, packet switching centres (PSC) and package assembler/disassembler (PAD);
- software for office automation, E-Mail and computer teleconferencing systems;
- intelligent intermediary systems and computer-aided training systems.

IAS has scientific and business contacts with national and foreign companies, enterprises and companies as well as UNESCO and UNIDO.

Being a National Centre for Automated Data Exchange with Foreign Computer Networks and Databases (NCADE), IAS makes it possible to have remote access to IASNET and ACADEMENT national computer networks, and the following foreign ones: TRANSPAC, Project PSS and Mercury, Britain, DATAPAC, Finland, Radio Austria, Austria, Telenet USA, DATAPAC, Canada, etc. Databases on science, technology, business, politics, ecology and agriculture are accessible through computer networks.

IAS provides E-Mail services to the foreign companies accessible to the Commonwealth of Independent States and helps them to communicate with their customers all over the world.

Our address: 2a Nezhdanova Street, Moskow, 103009, Russia
Phones: 229 78 46 & 132 53 55,
Telex 411609 IPAS SU,
Fax: 7-095-229-32-37

FREE FLIGHT

կրթական կենտրոնը հրավիրում է

մասնակցել անգլերեն լեզվի դասընթացներին, որոնք կազմակերպվում են Ամերիկյան համալսարան ընդունվողների եւ լեզվի հաստատուն գիտելիքներ ստանալ ցանկացողների համար:

Ընդունելությունը կատարվում է հետեւյալ բաժիններում.

1. Սկսնակների առաջադիմ ուսուցում (Beginner level)
2. Լեզվի զարգացման երգիր (Intermediate level)
3. Լեզվի կատարելագործման երգիր (Advanced level)

Դասընթացներն անց են կացվում հատուկ գրականության եւ տեսանյութերի միջոցով, ամերիկացի մասնագետների կողմից:

FREE FLIGHT կրթական կենտրոնի հասցեն է. Երեւան, Աբովյան 14, «Երեւան» հյուրանոց, #302 սենյակ, հեռ. 52-94-18:

«ՄՅՈՒԴ»

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՆՑԵՌՆ

«ՄՅՈՒԴ» Իրավական կոնցեռնը շարունակում է ընդունելությունը «ՄՅՈՒԴ» ԻԿ-ին կից իրավագիտական ինստիտուտի նախապատրաստական բաժանմունքում:

Հասցեն: Երեւան 1, Թումանյան 11, Հեռ. 56-75-07, 58-21-18

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակ

Նախագծի առաջին գլխում, որը նվիրված է պետականության սահմանադրական հիմունքներին, արվել են մի շարք էական փոփոխություններ եւ լրացումներ:

Այսպես, հաշվի առնելով հաղորդագիրներից ստացված բազմաթիվ առաջարկները եւ միջազգային փորձագետների կարծիքը, Հայ Դատին նվիրված հոդ. 3-ից հանվել են առաջին եւ չորրորդ դրույթները եւ հոդվածում ավելացել է նոր դրույթ «1. Հայաստանի Հանրապետության համաժողովրդական քննարկման ժամանակ ակնհայտ դարձավ, որ մերկա իշխանությունները վճռականորեն դեմ են Հայ Դատի արդարացի լուծման եւ հայրենիքի գեղատպանության պաշտոնական դատարդարմանն ու դրա հետեւանքների վերացմանը:

Նախագծի

ԱԶԳ

Միջազգային

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ֆինանսական դիտորդային հասատություններից Թուրքիան «վատ գնահատական ստացավ»

ԲԱԺԴԵՆ ՀԵՐՄՈ, ԱԲԱՅԱՆ

1980-ական թվականներից սկսած միջազգային տնտեսական եւ ֆինանսական շրջանակներում կարեւորվում են ոչ-ինչգային հասատությունների ախտորոշումները, որոնք որոշում են տնտեսական աջակցության կարիք ունեցող երկրների կայունացման ու վստահելիության ցուցանիշները: Դրանք ամեն տարի մոտիկից հետեւում են տարբեր երկրների տնտեսություններին, վերլուծում ու գնահատական տալիս: Իսկ նախկինում որեւէ երկրին դրամական օգնություն հասկացվում էր բանկերի գլխավորների ցանկությամբ: Այժմ արդեն, ըստ այդ գնահատականների, նախապես հայտնի է դառնում տվյալ երկրի վճարունակությունը: Դրամական օգնության դիմանց ունեցող երկրներ եթե ոչ-ինչգից բարձր գնահատականներ են ստացել, բնականաբար հարուստ երկրներին վստահություն են ներշնչում եւ վտխառություն ստանում ցածր տոկոսով, իսկ հակառակ դեպքում մեծանում է վտանգի ազդակը դատարկվում են ընդունել բարձր տոկոսով վճարվելիք դրամներ:

Moody's եւ Standart and Poors ամերիկյան հասատությունները ահա այս տիպի տնտեսական հետազոտություններ կատարող միջազգային կենտրոններից են, որոնք Թուրքիայի տնտեսությանը, Օզալից սկսած մինչեւ անցյալ տարի, տվել էին BBB կամ 3B գնահատականը, այսինքն, վտանգի ազդակը շատ ցածր, վճարողունակ եւ առաջիկայում վստահելի բարձր գնահատականը:

1993 թ., չնայած Թուրքիայի արտաքին դրամը գնալով ավելանում էր (ներկայումս 54 միլիարդ դոլար) եւ արժեզրկումը աճում (դրամանիշը տարեկան 71 տոկոս), նույն տնտեսական հետազոտություններ կատարող հասատությունները, չընդունելով որոշ կասկածներ, մի անգամ եւս Թուրքիային տվեցին 3B բարձր գնահատականը: Ամիսներ հետո, ամերիկյան ոչ դրամական աղբյուրներից կամաց կամաց մամուլի ականջն ընկած տեղեկություններ հայտնում էին, որ «եթե Թուրքիայի քաղաքական կյանքի հորիզոնում չնկատվեին որոշ հույսեր, առանց վարանելու նրա տնտեսական վիճակին դիտի տվեր BB կամ 2B նվազ գնահատականը»: Այդ որոշ հույսերը կապվում էին տիկին Թանսու Չիլլերի հետ: ԱՄՆ-ում երկար տարիներ ուսանած, նույնիսկ, բաս որոշ դիմումներ նաեւ ամերիկահպատակ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թանսու Չիլլերի անկայությունը ինքնին տալիս էր աղահովության հավատիներ արեւմտյան գոնե մի տարի եւս համբերելու համար:

Սակայն 1994 թ-ի հունվարի 13-ի լուրը Անկարայի եւ Սամբոլի գործարար շրջանակներում դյուրեց ռումբի ուժգնությամբ Moody's-ը եւ Standart and Poors-ը Թուրքիայի տնտեսությանը տալիս են BB կամ 2B ցածր գնահատականը: Այսինքն, Թուրքիան «ներդրում կատարելու համար երկիր» ասիճանից ընկնում էր «վտանգի ազդակ ունեցող, ներդրումի կարիք զգացող երկիր» ասիճանը, որը նշանակում է, թե Թուրքիան արդեն ավելի դժվարությամբ արտաքին աշխարհից դրամներ կվերցնի եւ ավելի բարձր տոկոսներով, ավելի կարճ ժամկետներում վճարելու դրամներով:

Միջազգային տնտեսական դիտորդների կարծիքով, դրամավում է նաեւ մի այլ վտանգ: Թուրքիան Ամերիկայի շուկայում մտցրել էր իր բաժնետոմսերը, որոնց տերերը, եթե այս ցածր գնահատականից հետո սկսեն էժան գներով վաճառել դրանք, ահա այն ժամանակ տնտեսական լուրջ ճգնաժամ կստեղծվի:

Ամերիկյան Սոլոմոն բրաթերս, Լեմոն եւ Էյմ ֆինանսական հասատությունների, որոնք հայտնի են Թուրքիայի հետ երկար տարիներ շարունակվող ֆինանսական գործարքներով (հարեւան լոբբիստների միջոցությամբ), գլխավոր դրամատնտեսները հայտնում են, թե սա չոտեսք է մեկնաբանել որոշ հանրապետական արարք, այլ նախազգուշացում՝ ղեկավարված բարեկամական կառավարությանը, ուշացած տնտեսական միջոցառումներն արագացնել տալու նպատակով:

Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը Անատոլիական գործակալությանը հետեւյալն է ասել. «Ամեն դեպքում սա ուրախանալու երեւույթ չէ, բայց լացելու վիճակ էլ չէ: Բացարձակապես չեմ ընդունում «նրանք Թուրքիայի բշնամի են» արտահայտությունը: Քանի որ նրանք ունեն իրենց չափանիշերն ու հաշիվները: Երբ մեզ բարձր գնահատականներ էին տալիս, մեր բշնամիները չէին, իսկ երբ ցածր տվեցին, մեր բշնամիները եղան: Ոչ, պետք չէ մտահոգվել: Թուրքիան այսօր 18,5 միլիարդ ամերիկյան դոլարի պահեստային փող ունի: Թուրքիան կարողանում է հոսք գտնել, գործարաններն աշխատեցնում է, արտերը ծայրից ծայր մշակված են: Ոչ մի բնագավառում պահանջ չունի Թուրքիան: Չպետք է մոռանալ, որ Թուրքիան ներկայումս 10 միլիարդ ամերիկյան դոլարի չափով նոր դրամների առաջարկներ ունի, որոնց մասին դեռ որոշում չի եղել: Այսօր այսպես կլինի, վաղն այնպես: Թուրքիայի առաջ ներկայումս երկու ամենակարեւոր հարցեր կան. նախ դեպքական հասատությունների բերությունները, որոնք որոշում իրենց չեն արդարացնում, երկրորդը՝ արժեզրկման աճը: Եթե այս երկու հարցը լուծենք, բացարձակապես մտահոգվելու տեղ չի մնա»:

Իրականում Սուլեյման Դեմիրելը այդպես չէր գոհացնում Արեւմուտքին, քանի որ մեծ ակտիվությամբ չէր են բարկվում դեպքական հիմնարկներն արագորեն ու միանգամից սեփականաշնորհելու գաղափարին: Մյուս կողմից, երկրում մեծ հեղինակություն ունեցող դեմքին հեռացնելը սխալ կլիներ: Լուծումը գտնվեց Օզալի մահից հետո: Սեփականաշնորհման գաղափարին սխրահար Չիլլերը բերվեց գործնական քաղաքականության ատաղարեզ, իսկ հեղինակավոր Դեմիրելին հանձնվեց հանրապետության նախագահի աթոռը:

Թուրքիան արտաքին դրամներից բացի ունի նաեւ ներքին դրամներ, որոնք ծրագրված էր փակել դեպքական հիմնարկների սեփականաշնորհման եկամուտներով: Սակայն երեւում է, որ բավական ժամանակ կորսվեց, եւ Չիլլերի կառավարությունն սխրդված էր ներքին դրամները փակել արտաքին դրամների հաշվին, որը, տնտեսական օրենքներով, դարձեալ չէր կարելի ավանդույթ դարձնել: Արտասահմանից ստացված դրամները ընդհանրապես օգտագործվում են կամ նոր ու հիմնական եկամուտներ ձեռք բերելու, արտադրությունն ավելացնելու ու գործարաններ բացելու նպատակով, կամ էլ, Լատինական Ամերիկայի երկրների օրինակով, սեփականաշնորհման դրամատոմսերով գործարարներին մեկ, երկու կամ երեք տարի շարունակ գործարարության նպաստ տալու համար:

Ավելացնենք, որ Թուրքիայի տնտեսական ներկա կացությունը, այս անգամ Japon Credit Acency հասատությունից, հունվարի 16-ին հազիվ կարողացավ ստանալ 3B բարձր գնահատականը հակառակ Moody's-ի եւ Standart and Poors-ի: Թուրքիան նույն Ճապոնիայից 1 միլիարդ, Ֆրանսիայից եւ Շվեյցարիայից էլ 250-300-ական միլիոն դոլարի նոր դրամներ ստանալու դրամատոմսեր ունի:



ԴԱՎՈՍ

Հելմուտ Քոլ. Արեւմուտքը բարի ճոճի չէ, հույս մի դրեք նրա վրա

ԺՆԵՎ, 28 ՀՈՒՆՎԱՐ, ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ: Հույս չդնել Արեւմուտքի, որպես «բարի ճոճու» վրա, որը կգա եւ արեւելաեվրոպացիների փոխարեն կլուծի նրանց խնդիրները, այլ անձամբ կարգուկանոնց օգնություն հասկացնել միայն այն բանի համար, որ նրանք կարողանան օգնել իրենց»: Վարկերի ձեւով արվող օտարերկրյա ֆինանսական ներդրումները եւ աջակցության մյուս ձեւերը բավարար չեն հաջողության հասնելու համար: Խնդիրների լուծման բանալին հենց այդ գործությունների ձեռքին է, եւ «ոչ ոք չի կարող նրանցից վերցնել այդ պատասխանատվությունը», ասաց Գերմանիայի կառավարության ղեկավարը:

Բաղձալի ելույթի ճանապարհին հաջողության հասնելու համար ավելի շատ քանիներ գործադրելու արեւելյան բարեփոխականներին ուղղված կոչը դրա հետ մեկտեղ չի նշանակում, թե Արեւմուտքը լվանում է ձեռքերը: Դիմելով Դավոսում հավաքված համաշխարհային բիզնեսի, գործությունների ու կառավարությունների ղեկավարներին, տնտեսագետներին ու քաղաքագետներին, Հելմուտ Քոլը հայտարարեց, որ հարկավոր է դարձյալ աջակցել աշխարհաբաժի արեւելյան կատարվող տնտեսական բարեփոխումներին: «380 միլիոնանոց բնակչություն ունեցող գործությունների բարեփոխումների ծախողումը ճակատագրական կլիներ Արեւմտյան Եվրոպայի եւ առհասարակ ամբողջ արեւմտյան աշխարհի համար», ասաց նա: Նման վարքը կարող է ավելի մեծ թվով մարդկանց դրդել լավագույն բախտ փնտրելու արտասահմանում:



ՀԵՏԱՔՐՔՐՈՐ

Երկնաքարերը մշտապես «ռմբակոծում են» Երկիրը

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 27 ՀՈՒՆՎԱՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեր մոլորակը մշտապես ենթարկվում է խոշոր երկնաքարերի «ռմբակոծումներին», որոնք մթնոլորտի վերին շերտերում պայթում են միջուկային ռումբերի պես: Ինչպես հաղորդեց «Նյու Յորք թայմզ» թերթը, վերջերս վերջերս Պենտագոնի գաղտնազերծած փաստաթղթերում չի ճշգրտվում, թե կոնկրետ ինչ արբանյակային համակարգեր են գործի դրվել երկնաքարերի վերաբերյալ տվյալ հավաքելու համար: Միայն նշվում է, որ որոշ արբանյակների վրա տեղակայված են եղել ինֆրակարմիր տվիչներ, որոնք պետք է հետեւեին բալիստիկ հրթիռների արձակումներին, մյուսների վրա՝ հեռուստատեսային եւ լուսանկարչական հատուկ սարքավորումներ՝ ցամաքային միջուկային պայթեցումների վերահսկման համար:

Նման տեղեկությունների հավաքման կարեւորությունը հաստատվեց 1979 թ., երբ Հնդկական օվկիանոսի վրա ամերիկյան արբանյակներն արձանագրեցին առեծվածային վառ բռնկում: Քանի որ դա տեղի էր ունեցել Հարավաֆրիկյան Հանրապետության մոտակայքում, կասկածներ ծագեցին, թե Պրետորիան մթնոլորտում անցկացրել է սեփական միջուկային ռումբի պայթեցում: 1980 թ. դեկտեմբերին Հարավաֆրիկյան Հանրապետության ափերի մոտ նկատվեց նոր բռնկում: Մոտավորապես երկու ամիս անց Պենտագոնի վերլուծաբանները հանգեցին այն եզրակացության, որ դրա պատճառը եղել են երկնաքարերը: Ինչպես նշում են փորձագետները, նույնիսկ ամենաարդիական տեխնոլոգիայի տեր ԱՄՆ-ից «մի քանի ամիս է պահանջվում մթնոլորտում պայթյունի աղբյուրը պարզելու համար: Դա թույլ է տալիս ենթադրել, որ զարգացող երկրները եւ անհամեմատ ավելի վաս սարքավորումներ ունեցող հնարավոր հակառակորդները միանգամայն կարող են մթնոլորտային պայթյուններից մեկը սխալմամբ համարել իրենց դեմ ուղղված միջուկային հարձակում եւ պատասխան հարված հասցնել առավել հավանական ագրեսորին»:

VENOTECH VT
LTD COMPANY
«ՎԵՆՈՏԵԽ» ֆիրման առաջարկում է մատակարարել «Shivaki» ֆիրմայի արտադրության տնտեսատարողունակությամբ տանտիրուհիների գաղտնի գներով:
Հանգամանքներ. 53-29-82, 28-21-55

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Չայկովսկու մահվան պատճառը

Վերջերս մամուլում հրապարակվեց Պետերբուրգի Չայկովսկու թանգարանի տնօրեն Վլադիմիր Լեբեդևի հոդվածը, որտեղ վերջապես հերքվում էր Չայկովսկու մահվան պատճառի մասին տարածված լուրերը: Հոդվածագիրը հանգամանորեն ներկայացնում է Չայկովսկու հանկարծամահ լինելու հանգամանքները, ինչպես նաև հերքում է դրանց հետ կապված բազմաթիվ զրպարտանքներ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Արարատը» մրցաշարին հրաժեշտ տվեց ժամկետից շուտ

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,
Մարզական մեկնաբան

Մոսկվայի ծածկած երեք մարզադահլիճներում տեղի ունեցող նախկին ԽՍՀՄ հանրապետությունների չեմպիոնների գավաթի երկրորդ խաղարկության առաջին երկու տարում Հայաստանի չեմպիոն ու գավաթակիր Երևանի «Արարատը» զիջեց մրցակիցներին և անկախ խմբային մրցաշարի վերջին տարի հանդիպումից, որը տեղի ունեցավ երեկ Մոսկվայի «Դինամոյի» հետ, ժամանակից շուտ հրաժեշտ տվեց մրցաշարին:

Հայ ֆուտբոլիստներն առաջին տարում մրցեցին Լատվիայի չեմպիոն Ռիգայի «Սկոնտո» թիմի հետ, որին զիջեցին 2-3 հաշվով: Երկրորդ տարում «Արարատն» էլ ավելի անհաջող հանդես եկավ և 1-4 խոշոր հաշվով ոչարտվեց Թուրքմենստանի չեմպիոն Աշգաբադի «Կոպետ-Դաղին»: Ինչ խոսք, երբ հաշվի առնենք մոտ անցյալի հայկական ֆուտբոլի և հատկապես Խորհրդային Միության բարձրագույն խմբում երկար տարիներ հանդես եկած Երևանի «Արարատի» հեղինակությունն, ապա հիշյալ մրցակիցների հետ հանդիպումներում նման արդյունքներ ոչ ոք չէր կարող ենթադրել: Վերոհիշյալ մրցակիցները երբեք իրենց ֆուտբոլային կարգով բարձր չեն եղել: Ճիշտ է, «Սկոնտոն» արդեն միջազգային փորձ ունի և մասնավորապես Եվրոպական երկրների չեմպիոնների գավաթի խաղարկությունում մրցել է՝ Մոսկվայի «Սպարտակի» հետ, չնայած որ զիջել է խոշոր հաշվով: Ինչ խոսք, հետ է ճնշադատել «Արարատին», սակայն հանուն ճշմարտության պետք է խոստովանել, որ մյուս բոլոր բնագավառների պես, ֆուտբոլը նույնպես Հայաստանում ճգնաժամ է ապրում: Գլխավոր դասընթացներից սոցիալ-տնտեսական վիճակն է հանրապետությունում: Պատասխանատու մրցաշարից առաջ «Արարատն» իր կարճատև մարզումները սահմանված անցկացրել է մեծ ֆուտբոլի համար ոչ մի պայմաններ չունեցող Երևանի ջերմաէլեկտրակայանի փոքրիկ դահլիճում:

Հասկանալի է, որ բիմը չէր կարող առանց խաղային պրակտիկայի և ֆունկցիոնալ լավ պատրաստականության հավասար դայֆար մղել թեկուզ ոչ ֆուտբոլային հեղինակություն ունեցող հանրապետությունների չեմպիոնների հետ: Միայն դրանով պետք է բացատրել, որ «Արարատը» երկու խաղում սեփական դարպասն ընդունեց 7 գնդակ, այդ այն դեպքում, որ Հայաստանի Հանրապետության վերջին առաջնությունում բաց էր թողել ընդամենը 9 գնդակ: Կարելի է նաև պատճառաբանել, որ մարզադահլիճի ֆուտբոլը չի կարելի լրջորեն համեմատել սովորական ֆուտբոլի հետ: Այնուամենայնիվ ուրախանագրված արդյունքները մոտոր մոտորների լուրջ նյութ տվեցին և պետք է ուղիներ փնտրել հայկական ֆուտբոլի նահանջի դեմն առնելու համար, մանավանդ, որ այս տարի եվրոպական մրցաշարեզ են դուրս գալու ոչ միայն հանրապետության հավաքականները, այլև ակումբային թիմերը:

1-ին խումբ

Ինչպես ենթադրվում էր, այստեղ բոլորից հաջող է հանդես գալիս նմանատիպ նախորդ մրցաշարի հաղթող Մոսկվայի «Սպարտակը», որն էլ վստահորեն գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

«Զիմբրուլ» (Քիշնև)-«Անսաղ» (Պավլոդար, Ղազախստան)՝ 1-0
«Սպարտակ» (Մոսկվա)-«Նորմա» (Տալլինն, Էստոնիա)՝ 3-0
«Սպարտակ»-«Զիմբրուլ»՝ 3-1
«Անսաղ»-«Նորմա»՝ 7-1

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1. Սպարտակ	4	2	2	0	0	8-1
2. Անսաղ	2	2	1	0	1	7-2
3. Զիմբրուլ	2	2	1	0	1	2-3
4. Նորմա	0	2	0	0	2	1-10

2-րդ խումբ

«Արարատ»-«Սկոնտո»՝ 2-3
«Դինամո»-«Կոպետ Դաղ»՝ 3-2
«Կոպետ Դաղ»-«Արարատ»՝ 4-1
«Դինամո»-«Սկոնտո»՝ 2-0

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1. Դինամո	4	2	2	0	0	5-2
2. Կոպետ Դաղ	2	2	1	0	1	6-4
3. Սկոնտո	2	2	1	0	1	3-4
4. Արարատ	0	2	0	0	2	3-7

3-րդ խումբ

Այստեղ վերելքով է խաղում Վրաստանի չեմպիոն Թբիլիսիի «Դինամոն», որին մասնագետներ համարում են մրցաշարի հաղթողի իավակնորդներից մեկը: Մեկնարկային երկու հանդիպումներում նույնիսկ հաղթանակ է տարել նաև Ադրբեջանի չեմպիոն Բաքվի «Նեֆչին», որը բաղաքական նկատառումներով, որոնք էլ ծիծաղելի լինի, հանդես է գալիս գոյություն չունեցող Ադդամի «Ղարաբաղի» անվան տակ:

«Դինամո» (Թբիլիսի)-«Ռոմար» (Մաժեյկյայ, Լիտվա)՝ 5-1
«Ղարաբաղ» (Ադդամ)-«Սիտորա» (Դուշանբե, Տաջիկստան)՝ 4-0
«Դինամո»-«Սիտորա»՝ 6-2
«Ղարաբաղ»-«Ռոմար»՝ 2-1

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1. Դինամո Թբ.	4	2	2	0	0	11-3
2. Ղարաբաղ	4	2	2	0	0	6-1
3. Ռոմար	0	2	0	0	2	2-7
4. Սիտորա	0	2	0	0	2	2-10

4-րդ խումբ

Այս խմբում առաջատարներն են Ուզբեկստանի չեմպիոն Ֆերգանայի «Նեֆչին» և հաշվարկից դուրս եղույթ ունեցող Ռուսաստանի երիտասարդական հավաքականը: Ընդ որում, ՌԵՀ-ի խաղացող, Մոսկվայի «Տորպեդոյի» հարձակվող Տալալաևը, «Ալգայի» հետ խաղում դարձավ 4 գոլի հեղինակ:

«Նեֆչի»-«Ալգա» (Ֆրունզե)՝ 6-0
ՌԵՀ-«Դինամո» (Մինսկ,)՝ 1-0
ՌԵՀ-«Ալգա»՝ 10-0
«Նեֆչի»-«Դինամո» Մն.՝ 5-1

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1. ՌԵՀ	4	2	2	0	0	11-0
2. Նեֆչի	4	2	2	0	0	11-1
3. Դինամո Մն.	0	2	0	0	2	1-6
4. Ալգա	0	2	0	0	2	0-16

ԹԵՆԻՍ

Սամփրասը հավասարը չունի

Մելբուռնում ավարտվեց «Մեծ սաղավարտի» մրցաշարերից մեկը՝ Ավստրալիայի բաց առաջնությունը:

Տղամարդկանց մրցաշարում կրկին հավասարը չունեցավ աշխարհի թիվ մեկ թենիսիստ Փիթ Սամփրասը (ԱՄՆ), որը եզրափակիչում առավելության հասավ իր հայրենակից Տոդ Մարտինի նկատմամբ (7-6, 6-4, 6-4): Սամփրասը հաշվի առնելով նախորդ տարվա «Ռոլանի» և ԱՄՆ-ի բաց առաջնությունները, «Մեծ սաղավարտի» ծրագրի մեջ մտնող 3-րդ անընդմեջ մրցաշարը շահեց:

Կանանց մենախաղերում էլ անակնկալ չեղավ: Այստեղ էլ վերջնական հաղթանակը տոնեց աշխարհի ուժեղագույն թենիսիստուհի Շտեֆի Գրաֆը (Գերմանիա), որը եզրափակիչում առավելության հասավ Արանչա Սանչես-Վիկարիոյի նկատմամբ (Իսպանիա), (6-2, 6-0): Դրա համար նրանից պահանջվեց ընդամենը 57 րոպե:

Գրաֆը 15-րդ հաղթանակը տարավ «Մեծ սաղավարտի» մրցաշարերում:

Ավստրալիայի առաջնության կանանց զուգախաղերում հաջողությունն ուղեկցեց Նատալիա Զվերևա (Մինսկ) - Ջիջի Ֆերնանդես (ԱՄՆ) երկյակին:

Ուշագրավ է, որ աշխարհի ուժեղագույն թենիսիստներից շատերն, իրենց եկամուտների առյուծի բաժինն աղահովում են անչափ ուսուցողական հանդես եկող թենիսի մրցումներից դուրս:

Այսպես Շտեֆի Գրաֆը միայն «Վիլսոն» ընկերությունից տարեկան ստանում է մեկ միլիոն դոլար, վերջինիս արտադրության ռակետներով խաղալու համար:

Ինչ վերաբերում է Սամփրասին, ապա նա միաժամանակ լավ բիզնեսմեն է:

Անվանի թենիսիստը, վարդեստրեն օգտվելով իր հանրությունից, հստրեն է վարում նաև կոմերցիոն գործերը: Նյու Յորքի փողոցներում հիմա հաճախ կարելի է գովազդային ցուցապատասանների վրա տեսնել Սամփրասի դատկերները, որ նա գովազդում է «Rugby» ընկերության հագուստեղենը: Կողից միլիոնները երբեք չեն խանգարել որևէ մեկին: ■

ՄԱՐԱԼԱԽԱՂ

Չինվենք համբերությամբ

Լիարյուն կյանքով է ապրում Հրազդանի ֆաղսդորտկոմիտեի մականախաղի օլիմպիական հերթափոխի մարզադդորդը: (Հարուստ ավանդույթներով այդ հասատության թիմերը երկար տարիներ բարձր են դահել Հայաստանի մարզական դրոշի դատիվը՝ հաղթանակներ տանելով համամիութենական առաջնություններում և միջազգային մրցաշարերում:

Վերջին տարիներին, իհարկե, նշած ՕՀՀՄՊՄԲՏ-ի սաները, մեզանում առկա մյուս մարզաձևերի ներկայացուցիչների նման, հասկանալի դատճառներով գրեթե հանդես չեն գալիս արտերկրյա մրցումներում: Իսկ եթե նման առիթ ներկայանում է՝ մեր մականորդները դարձյալ վստահ խաղով են աչքի ընկնում: Ահավասիկ, անցյալ տարի համաիրանական խաղերում մեր երկիրը ներկայացրած հրազդանցի մականորդները 13 թիմերի դայֆարում գրավեցին առաջին տեղը և նվաճեցին հաղթողի կոչումը:

Այս մրցաշրջանում էլ նշած խաղերում Հայաստանը ներկայացնելու են հրազդանցիները, ստույգ ՕՀՀՄՊՄԴ-ի «Մական» թիմը: Կոլեկտիվի անդամները վաստակավոր մարզիչ Ժ. Մկրտչյանի գլխավորությամբ լրջորեն են նախադատրաստվում առաջիկա մրցուղերին նախորդ խաղերում ձեռք բերած հաջողությունը կրկնելու նդատակով: Պարադմունքներն ընթանում են մարզադդորդի դահլիճում, երբեմն էլ՝ Ծաղկաձորի օլիմդիական մարզավանում (երբ հաջողվում է լուծել տրանսդորտի հարցը): Թե ինչդիսին կլինեն արդյունքները, կիմանանք ետսով: Իսկ ընդհանրապես մականորդների համար համաիրանական խաղերի մեկնարկը կտրվի փետրվարի հինգին Թավրիզում: Հ. Ն.

ՍՈՐՅԱ

«Ասված կարող է լեռներ տեղափոխել»

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
սեփ. թղթ. Ֆրանսիա

Գրեգ Շեղդարդ անունով ավստրալացի 17-ամյա մի դատանի տատադում է փախստով, եւ գնալով նրա վիճակն անհուսալի է դառնում: Բժիշկների կարծիքով մահ ու կենաց կռիվ մղող Շեղդարդի օրերը հաշվված են: Հիվանդությունից առաջ Գրեգը մարզվում էր հեռացատկով եւ ուզում էր դառնալ անվանի մարզիկ: Բայց կանխե ուրիշ բան որոշեց: Զգալով մոտալուտ մահը՝ Գրեգ Շեղդարդը երազում էր տեսնել իր մարզական կուռիվ աշխարհի եւ օլիմդիական խաղերի բազմակի չեմդիոն, ամերիկացի Կարլ Լյուիսին: Դատանու վերջին խնդրանքը կատարելու համար, Գրեգի հարազատները հեռաձայնեցին Կարլ Լյուիսին: Առանց որեւէ մեկին տեղեկացնելու անվանի մարզիկն Հյուսիսային Քարոլինայից առաջին իսկ օդանավով մեկնեց Մելբուռն:

Նա ներկայացավ Գրեգ Շեղդարդին եւ մի քանի ժամ մնաց մոտը: Գրեգ Շեղդարդը, որ Կարլ Լյուիսի դես ուժեղ հավատացյալ է, ասաց. «Ասված կարող է լեռներ տեղափոխել: Ես երբեք չեմ մոռանա այս հանդուգն մարդու առածն իմ հանդեպ»: Կարլ Լյուիսը նույնդես հայտարարեց. «Այս օրն ինձ համար նույնդես անմոռանալի է»: Այս է հայտնի մարզիկի մեծ կամքը, մեծ սերն ի շահ մարդկության: ■

ԽԾԱՆԿԱՐ

Կորել է Սաբոնիսի եղբոր քիթը

Կաունասի «ժալգիրիսի» եւ ԽՍՀՄ-ի նախկին հանրահայտ խաղացող Արվիդաս Սաբոնիսի փոքր եղբայրը վերջերս Կաունասի երիտասարդների եւ ոսդիկանության միջեւ ծագած կռվի ժամանակ զրկվել է քթից: Օրենքի դահապանը, հայտնվելով ուժով եւ չափերով գերազանցող հակառակորդի ոտքաներում, ինքնաբաբտդանության նդատակով, առանց երկար մտածելու կծել դրկել է Սաբոնիսի եղբոր մարմնի վերը նշված մասը: Ինչդես նշում է «Լետուվոս Ռիտաս» թերթը, միջադեդի հանգամանքները հետաքննվում են, սակայն Արվիդասի եղբոր քիթը գտնել այդդես էլ չհաջողվեց:

Բասկետբոլային ռեկորդակիրը

Հերվե Դուդուսոնը 36 տարեկանում մնում է Ֆրանսիայի թիվ մեկ ռմբարկուն, որը «Նացիոնալ 1» առաջնությունում արձանագրել է 11400 միավոր: Ֆրանսիայի հավաքականում, մասնակցելով 254 խաղի՝ Դուդուսոնը վաստակել է 3821 միավոր, որը նույնդես ռեկորդ է: Նա առաջին անգամ Ֆրանսիայի հավաքականում խաղացել է, երբ դեռ 17 տարեկան չկար: Հերվե Դուդուսոնը խաղում է Սո քաղաքում եւ հավանաբար այս մրցաշրջանում հրաժեշտ տա դրոֆեսիոնալ բասկետբոլին:

Ուայն Գրեցկու 2400-րդ գոլը

Դրոֆեսիոնալ հոկեյի ամենավառ աստղերից մեկը՝ Ուայն Գրեցկին, NHL-ի առաջնություններում արձանագրեց իր 2400 գոլը:

ԽԾԱՆԿԱՐ

Վան Բաստենը մարզվում է «Այաքսում»

1992 թ. եվրոդայի եւ աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Մարկո վան Բաստենը, որը հանդես էր գալիս Իտալիայի «Միլան» թիմում, ինչդես հայտնի է լուրջ վնասվածք էր ստացել եւ գրեթե մեկ տարի է ինչ հարկադրական դարադադրի մեջ է: Շատերի կարծիքով նրա վերադարձը մեծ ֆուտբոլ նույնիսկ խիստ կասկածելի է: Վան Բաստենը Իտալիայից վերադարձել էր իր հայրենիք Հոլանդիա, հանգստանալու եւ բուժվելու:

Անվանի ֆուտբոլիստն, այնուամենայնիվ անհատական ծրագրով վերսկսել է իր մարզումները: Վան Բաստենի խնդրանքով Ամստերդամի «Այաքս» թիմի ղեկավարները համաձայնել են, որ ինքն առայժմ մարզվի իր նախկին թիմի խաղացողների հետ: «Այաքսը» առաջարկությունն ընդունել է ուրախությամբ:

«Ռեալն» ուզում է փոխել մարզչին

0-5 հաշվով զիջելով մշտական մրցակցին՝ «Բարսելոնին» Մադրիդի «Ռեալի» ղեկավարները ուզում են փոխել թիմի գլխավոր մարզիչ Բենիտո Ֆլորոին: Նրանք արդեն առաջարկ են արել Փարիզի «Սեն Ժերմեն» թիմի դորտուգալացի հանրահայտ մարզիչ Արթուր Ջորջին, որ ստանձնի «Ռեալի» ղեկը, սակայն վերջինս հրաժարվել է: Գ. Ա.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրակարգ

ՊԱՏԵՐԱԶՄ

Կոչ-սահմանգ

ՄԵՏԱՔՍԻ

Քե՛զ եմ դիմում, իմ սիրելի ժողովուրդ: Դիմում եմ բոլորին, մեծից փոքր: Դիմում եմ բոլոր ունեւորներին, ճեռնարկատերերին, կոոպերատորներին, բոլոր կազմակերպություններին. գյուղի եւ քաղաքի աշխատավորությանն ու անհաս մարդկանց...

Դիմում եմ բոլոր նրանց, ում կրծքի տակ սիրտ է բաբախում, ում համար թանկ է Ղարաբաղը՝ հայոց աշխարհի այդ սուրբ կտորը, որ փորձում են խլել մեր ձեռքից: Արդեն վեցերորդ տարին է, ինչ Ղարաբաղի ուրեմն եւ մեր փրկության համար, կռվում են ու զոհվում, վիրավորվում ու արյուն են թափում մեր սիրասուն զավակները:

Այսօր մայրաքաղաքի հիվանդանոցները լեփ-լեցուն են մեր վիրավոր զավակներով, որոնք նյութական ու բարոյական աջակցության մեծ կարիք ունեն: Բուժաշխատողների համար անհնար է բոլոր վիրավորներին տածել հարկավոր ուշադրություն ու խնամք: Այդ պակասը ոտիտ լրացնենք մենք: Կյանքի այս անհնարին պայմաններում մենք հնարավոր օգնության ելնենք հիվանդանոցներում աղաքինվող ազատամարտիկներին: Ո՞վ ինչով կարող է...

Օգնությունը մի տեղ կենտրոնացնելու նպատակով հարմար գտանք Հայաստանի գրողների միության Ղարաբաղի ազատամարտիկներին օգնող հանձնախումբը, որի ճանապարհը ձեզ արդեն ծանոթ է: Դուք այնտեղ բողել եք ձեր գթարտության հայրենանվեր գոհողությունները, երբ 1992 ին, այսպիսի մի ցուրտ ձմեռ, օգնության հասավ Ղարաբաղում կռվող մեր ազատամարտիկներին: Գրողների միությունը ազատամարտիկներից երախտագիտության բազմաթիվ նամակներ է ստացել, ուղղված ձեզ, որոնց մի մասին ծանոթ եք դուք ընթացիկ մամուլից:

Ձեզ եմ դիմում, իմ սիրելի կանա՛յք, աղջիկնե՛ր, ուսանողուհիներ:

Այցելեք հիվանդանոցներում աղաղինվող մեր վիրավոր որդիներին ու եղբայրներին, ծերամարդ նրանց գթությունը մեր մայրերի, ժամիտների, ձեր զույգերի ու թանկավոր խոսքերի ջերմությամբ: Նրանք կարոտ են ընտանեական խնամքի, մոր, հոր, քրոջ, եղբոր հոգատարության: Ձեր գթարտությունը բող բալասան լինի աղաքինվող մեր քաջերի համար:

Սիրելի մայրե՛ր, քույրե՛ր ու հարսնացուներ, գործի դրեք ամրելո՛ւ եւ ամրեցնելո՛ւ ձեր հնարամիտ հանճարը, որի շնորհիվ դարեր շարունակ գոյատեւել է մեր ժողովուրդը, երբ հայրենիքը կանգնած է եղել վտանգի առաջ:

Հիշենք, թե ճակատագրական ինչպիսի զորավոր ուժ ունեցավ կանանց օգնությունը Սարդարապատի հերոսամարտում:

Մենք բոլորս պիտի խիզախենք թիկունքում, դառնանք մեր այսօրվա Լոլա Սասունին, Սաթենիկն ու Համասփյուռը, եղիսաբեթն ու Խանումը եւ եթե պահը գա՝ Սոսեն ու Շաֆեն, Ռուզանն ու Աղավնին եւ շատ երախտավորներ, որոնք իրենց կյանքը չխնայեցին մեր ժողովրդի փրկության ու հաղթանակի համար: ■

ԱՆԿԱՐԱ

Ադրբեջանական գրոհը՝ իրակա՞ն, թե՞ խաբուսիկ

Անկարայում լույս տեսնող «Թրքիս Դեյլի Նյուզ» անգլիագիր օրաթերթի հունվարի 28-ի համարում հրատարակվել է թուրքական ընդհանրապես շեփորահարող մամուլի համար անսովոր մի հոդված 1993 թ. դեկտեմբերի 18-ից ի վեր ադրբեջանական բանակի եւ օտարերկրյա վարձկանների կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ ղեկավարված հարձակողականի մասին: Թերթի աշխատակից Սեմին Դ. Իպիքը, վկայակոչելով Անկարայում թուրքական բանակի շտաբի եւ այլոց կարծիքը, կասկածի տակ է առնում այդ հարձակողականի նոյնատակահարմարությունը ժամանակի թե ռազմական նախադատրաստվածության առումով:

Խիստ հետաքրքրական այդ հոդվածը, որի գլխավոր հատվածները լույս կտեսնեն «Ազգի» առաջիկա համարում, որոշ բացահայտումներ է թողանդակում Անկարայում թե Բաքվում գիտնականական դեկավարության իրական տեսակետի մասին: Թուրքական թերթի համաձայն, նույնիսկ Հեյդար Ալիեւի ռազմական հարցերի գծով խորհրդական Նուրեդդին Սաղիկովը դեմ է եղել այդ հարձակողականին, իր խորհուրդը չհաղթելու դեպքում աղաղակով հրաժարական ներկայացնել: Սակայն նախագահ Ալիեւի քաղաքական նկատառումներն ավելի ծանր են կշռել, քան ռազմական. վերջինիս «մղելով ձմեռվա կեսին հրահանգելով ներկա հարձակողականը»:

Ամիրադարանագով Հորադիզում եւ այլոր ադրբեջանական բանակի առաջխաղացման փաստին, հոդվածագիրը նսեմացնում է դրանց ռազմագիտական նշանակությունը եւ շեշտում մարդկային զոհերի մեծ քանակը:

Ըստ նրա, օրինակ, Հորադիզում ադրբեջանական բանակի կորուստները կազմել են 2000 մարդ. Բանի որ, բացատրում է նա, զինվորների մարզումը դեռեւս ավարտված չէր եւ, երկրորդ, ռազմաճակատում տիրող բարձունքները գտնվում են հայերի ձեռքը:

ՀԱԿԱԲԸՆ

Լեհ-գերմանական ռազմական համագործակցություն

ՎԱՐՇԱՎԱ, 31 ՀՈՒԼՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Լեհաստանի պաշտպանության նախարար Պ. Կոլոդեյչիկը հայտարարեց, որ իր երկիրն եռաշնանաբար պատրաստվում է միանալ «Գործակցություն հանուն խաղաղության» նախաձեռնությանը: Լեհաստանը, սակայն նա Բեռլինում կայացած մամլո ասուլիսում, այդ ծրագրի հետ մեծ հույսեր է կապում եւ հատաս մտադիր է մասնակցել դրա իրագործմանը:

Լեհաստանի եւ Գերմանիայի պաշտպանության նախարարները նշեցին, որ երկու երկրները շահագրգռված են առավել սերտ երկկողմ կապերով: Նրանց խոսքերով, արդեն ծրագրված է մոտ 80 տարբեր միջոցառում, մասնավորապես այս տարի նախատեսված է համատեղ զորավարժություններ անցկացնել ինչպես գետնի, այնպես եւ Բալթիկ ծովի ջրատարածքում:

Աֆղանստանում 292 գերի եւ անհետ կորած զինծառայող

ՄՈՍԿՎԱ, 30 ՀՈՒԼՎԱՐ, ՍՏԱՐՔ: Նախկին 40-րդ բանակի 292 զինծառայողներ համարվում են Աֆղանստանի տարածքում գերի ընկած կամ անհետ կորած: Անցյալ տարեվերջին այս տվյալները էր բերել ինտերնացիոնալիստ ռազմիկների գործերի կոմիտեն: Այդ մասին հայտնեց կոմիտեի աշխատակից, ռազմագերիների որոնման եւ ազատագրման բաժնի պետ Լեոնիդ Բիրյուկովը:

Նրա խոսքերով, մինչեւ օրս կոմիտեին հաջողվել է ազատել 15 մարդու: Պարզվել է մոտավորապես 20-ի գտնվելու ստույգ վայրը, եւս մոտ 40-ի մասին մոտավոր տվյալներ կան: Զգալի օգնություն են ցույց տալիս միջազգային Կարմիր խաչը եւ ամերիկյան «Ֆրիդոմ հաուս» կազմակերպությունը, որի շնորհիվ գերությունից ազատվել է 10 մարդ:

Էստոնիայի «կանաչների» կոչը

ՏԱԼԼԻՆՆ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՍՏԱՐՔ: Էստոնիայի «Կանաչները» կոչ են անում երկրից արտաքսել Վլադիմիր Ժիրինովսկու կուսակցության ներկայացուցիչ Պետր Ռոժոկին, որպես «Էստոնիայի Հանրապետության նկատմամբ թշնամի անձի»:

Տարածված հայտարարությամբ նրանք վրդովմունք են հայտնում Ռոժոկի ելույթների առթիվ եւ նախագահին, կառավարությանն ու խորհրդարանին առաջարկում են Էստոնիայի տարածքում արգելել Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության եւ դրա անդամների գործունեությունը:

airtours

ՏԻԿՆԱՅՔ ԵՎ ՊԱՐՈՆԱՅՔ

Փետրվարի 7-ին եւ ամեն երեքշաբթի «ԷՅՐ ՏՈՒՐՍ» ֆիրման կազմակերպում է ուղիղ ավիաչվերթներ ԵՐԵՎԱՆ-ԿՐԱԿՈՎ (Լեհաստան):

Հյուրանոց, նախաճաշ, տրանսպորտային սպասարկում ԿՐԱԿՈՎՈՒՄ:

Ծանկացողների համար ֆիրման կազմակերպում է 3-օրյա էքսկուրսիա դեպի Բրատիսլավա (Սլովակիա)

ՏԱՍՅԵՆ՝ ՊՈՒՇԿԻՆԻ 43, ՀԵՌ. 53.05.11, 53.39.22:

ARINA

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ըստ նախարարի, այսօր պետք է բացվեն դպրոցների դռները

Անցյալ շաբաթ լուսավորության նախարար Հայկ Ղազարյանը հեռուստատեսությամբ հայտարարեց, որ փետրվարի 1-ից գործելու են մայրաքաղաքի դպրոցները:

Երեկ հեռախոսային զրույցով լուսավորության նախարարի օգնական պրն. Աստեղյանը հաստատեց, որ, իրոք այսօր դպրոցներ կբացվեն, եւ դասարանների տաքացումը կիրականացվի տարբեր վառարանների օգնությամբ, նաեւ կենտրոնական ջեռուցմամբ (կենտրոնական մասակարարմամբ ապահովված շրջաններում), իսկ այն հարցին, թե արդյոք բոլո՞ր դպրոցներն են պատրաստ աշակերտներ ընդունելու եւ դասեր անցկացնելու, պրն. Աստեղյանը պատասխանեց, որ ստույգ տվյալներ չունի:

Ռ. Խ.

Եղանակը Հայաստանում



ԹՈՒՐՔԻԱ

Թուրքերը ռմբակոծեցին հրդեհային ճամբարներ

ԼՈՆԴՈՆ, 28 ՀՈՒՆՎԱՐ, ՍՏԱՐՔ: Ինչպես հաղորդեց BBC ռադիոկայանը, Թուրքիան հայտարարել է, որ 50-ից ավելի թուրքական ռազմօդանավեր Իրաքի տարածքում ռմբակոծել են Քուրդ ապստամբների ճամբարներից մեկը:

Վարչապետ Թանսու Չիլլերը հայտարարել է, թե ճամբարը ՊՔԿ-ի գործողությունների պատճառով հիմնական հենակետն է եղել Թեհրանի հովտում եւ [illegible] ճամբարից հետո, որը 2 տարի առաջ լուծարվել է Թուրքիայի ճնշմամբ:

Չիլլերը [illegible] պատենակարեւոր գործողությունն [illegible] վերջին 10 տարում: Նա [illegible] այդ ճամբարում եղել է [illegible] 1000-ից ավելի գրոհայիններ: [illegible] զոհվում է թուրքական կահավորանքից [illegible] 100 կմ հեռու:

ՆՈՅ

«ՆՈՅ» ԲԱՆԿԸ

Բրավաբանական եւ ֆիզիկական անձանց համար բացում է եւ վարում ռուբլով եւ տարադրամով հաշիվներ:

Կատարում է դրամարկղային ապասարկում ռուբլով եւ տարադրամով:

Գնում եւ վաճառում է տարադրամ կանխիկ եւ անկանխիկ հաշվարկներով:

Կատարում է փոխանցումներ ՀՀ տարածքից դուրս:

Տրամադրում է կանխիկ վարկեր ռուբլով եւ տարադրամով:

Ընդունում է ավանդներ եւ դրանց դիմաց վճարում է՝ ՀՀ եւ ՌԴ ռուբլով՝

3 ամիս 45%,
6 ամիս 100%

ԱՄՆ-ի դոլլարներով՝ ամենամսյա վճարում 5%
3 ամիս 20 %,
6 ամիս 45 %

500 եւ ավելի ամերիկյան դոլլարով ավանդի դեպքում՝ ամենամսյա վճարում 7 %
3 ամիս 25 %,
6 ամիս 60 %

Դիմեք մեզ Երեւանի հետեւյալ հասցեներով

Պուշկինի 9 (մուտքը Արովյան փողոցից), հեռ. 59-28-36
Հանրապետություն 67, հեռ. 56-51-07
Չեխով 23, հեռ. 46-25-27,
Սարեալ Բաղրամյան 79, հեռ. 27-05-16
Կոմիտաս 52, հեռ. 23-12-55, 23-08-52
«Անի» հյուրանոց 507, 514 սենյակներ, հեռ. 59-45-14, 56-49-30

«ՆՈՅ» բանկը հայտնում է իր ավանդատուներին, որ 500 եւ ավելի ամերիկյան դոլլարով ավանդների դիմաց վճարվող տոկոսադրույքները հունվարի 15-ից բարձրացվում են՝ ամենամսյա վճարում 7%
3 ամիս 25%,
6 ամիս 60%

Գինը 100 տրամ

digitised by A.R.A.R.@